Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման 96-րդ տարեդարձի օրը պատմաբան Մհեր Հովհաննիսյանը փաստում է՝ այդ ժողովրդի միադնական հաղթանակն էր, որովհետև հասարակության բոլոր խավերը և կուսակցությունների ներկայացուցիչները միացել էին դաշնակցական Արամ Մանուկյանի կոչին:

Պատմաբանն այսօր զուգահեռներ է տանում առաջին և երրորդ հանրապետությունների ստեղծման միջև:

,Այս հաղթանակի կերտումը դաս էր, միասնականության վառ օրինակ մեր ժողովրդի համար: Եթե այն համադրենք 1980-ական թվականների շարժմանը և Արցախյան ազատագրական պայքարի այդ բուռն վերելքին, ապա կտեսնենք նույնականացում՝ ժողովրդի միասնականությունը ծայրահեղ վտանգավոր պահին, երբ դրված էր գոյության խնդիրե,- ասում է պարոն Հովհաննիսյանը:

1918թ.-ն հենց այն ժամանակահատվածն էր, երբ Հայաստանը հայտնվել էր միայնակ ամբողջ աշխարհի առջև: Վրաստանը գտել էր իր դաշնակցին՝ Գերմանիային, մյուս կողմից էլ ներկայիս Ադրբեջանը, որն այդ ժամանակ ներկայանում էր Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետություն անունով, Թուրքիայի դաշնակիցն էր. ,Իսկ հայկական կողմը միակն էր, որ նվաճեց իր անկախությունը, այլ ոչ թե ստացավ պարգև, ինչպես վրացիները և ադրբեջանցիները պարգև ստացանե,- ասում է պատմաբանը: Մհեր Հովհաննիսյանը հատուկ է ընդգծում այս փաստը, որպեսզի վերացնի այն թյուր կարծիքը, թե իբր մեզ նվիրել են այդ անկախությունը:

,Այս տեսակետը բնորոշ էր հատկապես խորհրդային և թուրքական պատմագրությունը, որտեղ անընդհատ փորձում էին ներկայացնել, թե այդ Բաթումի պայմանագրի սկզբունքով ստեղծված մի պետություն էր, որ մեզ տրվել էր Թուրքիայի կողմից որպես նվերե,- պատմական ակնարկ է կատարում պատմաբան Մհեր Հովհաննիսյանը՝ հավելելով, որ նման մտքեր արտահայտող մարդիկ մոռանում էին, որ հայ ժողովուրդը հենց Մայիսյան հերոսամարտերի ժամանակ տեր կանգնեց իր պետությանը և ազգին:

Recommend One person recommends this. Be the first of your friends. Share |